

ԳԱՎԱ ՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ
ՆԻՍՏԻ

16.03.2013թ.

Մասնակցում էին խորհրդի 16 անդամներ

Օրակարգ՝

1. Տնտեսագիտական Ֆակուլտետի դեկանի 2012-2013 ուսումնական տարվա I կիսամյակի հաշվետվություն
2. Տնտեսագիտական Ֆակուլտետի «Հաշվապահական հաշվառում» ամբիոնի 2012-2013 ուսումնական տարվա I կիսամյակի հաշվետվություն
3. Տնտեսագիտական Ֆակուլտետի «Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում» ամբիոնի 2012-2013 ուսումնական տարվա I կիսամյակի հաշվետվություն
4. Լուծարային շրջանի արդյունքների ամփոփում

1. Լսեցին Տնտեսագիտական Ֆակուլտետի դեկանի 2012-2013 ուսումնական տարվա I կիսամյակի հաշվետվությունը /Զեկուցող՝ Ս. Ամիրխանյան/:

Արտահայտվեցին Հ. Զաքոյանը, Ս. Բագոյանը, Հ. Ղուլոյանը, Ա. Ղարաբաղցյանը, Ն. Օհանյանը, Մ. Հերզնյանը, Ս. Ամիրխանյանը:

Որոշեցին Հավանություն տալ հաշվետվությանը և ներկայացնել համալսարանի գիտական խորհրդին:

2. Լսեցին Տնտեսագիտական Ֆակուլտետի «Հաշվապահական հաշվառում», «Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում» ամբիոնների 2012-2013 ուսումնական տարվա I կիսամյակի հաշվետվությունները /Զեկուցողներ՝ Հ. Ղուլոյան, Հ. Զաքոյան/

Արտահայտվեցին Ն. Թաղևոսյանը, Մ. Հերզնյանը, Ա. Ղարաբաղցյանը, Հ. Ղուլոյանը, Հ. Զաքոյանը, Ս. Ամիրխանյանը:

Որոշեցին Հավանություն տալ հաշվետվություններին և ներկայացնել համալսարանի գիտական խորհրդին:

5. *Լսեցին* Լուծարային շրջանի արդյունքների մասին հարցը /Ջեկուցող՝ Ս. Ամիրխանյան/

Դեկան Ս. Ամիրխանյանը ներկայացրեց լուծարային շրջանի ընթացքը և արդյունքները: Ջեկուցողը նշեց, որ

1. լուծարքը անցկացվել է սահմանված կարգի և ժամանակացույցի համապատասխան: Ակադեմիական պարտք ունեցող ուսանողները հիմնականում հանձնել են պարտքերը /ներկայացվեց ըստ առանձին ուսանողների ցուցանիշների և տրվեց նրանց բնութագիրը/: Առաջին և երկրորդ լուծարքների արդյունքում 2 ուսանողներ Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում բաժնից Էդգար Օհանյանը և Նորայր Շահբազյանը ակադեմիական անբավարար առաջադիմության պատճառով կներկայացվեն հետագման:
2. Ջեկուցողը ներկայացրեց, որ լուծարային շրջանի ընթացքի վերաբերյալ պարբերաբար զեկուցվել է ԳՊՀ ռեկտորատի նիստերում և այդ կապակցությամբ ռեկտորատում տրված հանձնարարությունները դարձվել են դեկանատի և ամբիոնների կողմից ամենօրյա գործունեության ուղեցույց:

Արտահայտվեցին Դ. Մովսեսյանը, Մ. Հերզնյանը, Ա. Ղարաբաղյանը, Հ. Դուլոյանը, Հ. Զաքոյանը, Ս. Ամիրխանյանը:

Որոշեցին

1. Հանձնարարել դեկանատին և ամբիոններին մշտական ուշադրության կենտրոնում պահել լուծարային շրջանում տեղ գտած թերությունները վերացնելու և առաջիկա քննաշրջանը ավելի արդյունավետ կազմակերպելու հարցը:

2. Հանձնարարել ամբիոններին հետևել ակադեմիական պարտքեր ունեցող ուսանողների ուսումնառությանը, անհրաժեշտության դեպքում լրացուցիչ խորհրդատվություն կազմակերպել

Խորհրդի նախագահ՝

Ս. Ամիրխանյան

Քարտուղար՝

Ա. Ավետիսյան